ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆ

10 փետրվարի 2016 թվականի N.20-Ն

## ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով՝ <Թաթսթոուն> ՍՊ ընկերության 2015 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 85 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Թաթսթոուն> ՍՊ ընկերության՝ ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրում արդյունահանում կատարելու համար, 2013 թվականի փետրվարի 11-ի թիվ ՇԱԹ-29/459 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 12.5 տարով, սահմանելով մինչև՝ 2028 թվականի հունիսի 1- ը:

2) ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի 01.01.2015թ դրությամբ հանքաքարի 7379.6 հազար տ մնացորդային պաշար ունեցող տեղամասն ընդլայնել՝ ընդհանուրը տրամադրելով՝ 1.X=4324470.23 Y=8601415.94 H=1770.0, 2.X=4324660.03 Y=8601016.81 H=1923.6, 3. X=4324750.83 Y=8601025.40 H=1915.7, 4.X=4324810.23 Y=8601162.86 H=1855.7, 5.X=4324847.67 Y=8601167.84 H=1871.5, 6.X=4324918.05 Y=8601151.90 H=1892.0, 7.X=4325007.50 Y=8601258.00 H=1877.4, 8.X=4325045.86 Y=8601734.45 H=1808.6, 9.X=4324989.83 Y=8601746.61 H=1800.0, 10.X=4324873.85 Y=8601659.62 H=1775.7, 11.X=4324858.93 Y=8601730.17 H=1791.2, 12.X=4324725.46 Y=8601714.62 H=1785.5, 13.X=4324633.43 Y=8601516.48 H=1793.4, 14.X=4324509.80 Y=8601460.23 H=1770.0, <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող տեղամասը՝ օգտակար հանածոյի՝ 15359.9 հազար տ հանքաքար մարվող պաշարով, այդ թվում՝ 11721.0 հազար տ սուլֆիդային և խառը հանքաքար և 3638.9 հազար տ օքսիդացված հանքաքար:

3) հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 1000.0 հազար տ սուլֆիդային և խառը հանքաքար և 268.0 հազար տ օքսիդացված հանքաքար:

4) 2013 թվականի փետրվարի 11-ի թիվ L-459 լեռնահատկացման ակտով տրամադրված տարածքն ընդլայնել, ընդհանուրը տրամադրելով՝ <1.X=4325368.2 Y=8601172.9 H=1760.

2.X=4325359.8 Y=8601191,3 H=1759, 3.X=4325186,5 Y=8601101,7 H=1832, 4.X=4325016.4 Y=8601287.2 H=1870, 5.X=4325148.5 Y=8602187.3, H=1682, 6.X=4324797.9 Y=8602580.0 H=1655, 7.X=4324706.8 Y=8602886.0 H=1625, 8.X=4324982.3, Y=8603089.4 H=1708, 9.X=4324992.0 Y=8603548.1 H=1710, 10.X=4324941.1 Y=8603600.6 H=1710, 11.X=4324647.5 Y=8603603.1 H=1650, 12.X=4324664.4 Y=8602717.0 H=1656, 13.X=4324557.1 Y=8602358.0 H=1674, 14.X=4324568.6 Y=8602310.3, H=1672, 15.X=4324532.2 Y=8602243.0 H=1680, 16.X=4324594.8 Y=8601973.3 H=1715, 17.X=4324519.8 Y=8601778.6 H=1720, 18.X=4324596.8 Y=8601752.8 H=1737, 19.X=4324537.9 Y=8601577.2 H=1753, 20.X=4324336.1 Y=8601446.7 H=1755, 21.X=4324452.0 Y=8601799.2 H=1718, 22.X=4324328.5 Y=8601863.4 H=1740, 23.X=4324316.9 Y=8602052.2 H=1735, 24.X=4324508.8 Y=8602268.4 H=1678, 25.X=4324209.4 Y=8602505.9 H=1820, 26.X=4323909.4 Y=8602341.7 H=1865, 27.X=4324311.4 Y=8601134.1 H=1782, 28.X=4324518.1 Y=8600929.8 H=1920, 29.X=4324837.9 Y=8600839.1 H=1925 <ARM WGS-84> համակարգի կոորդինատներով սահմանափակված՝ 156.16 հա տարածքը>>:

2. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ 2013 թվականի փետրվարի 11-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-459 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. *<<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին* – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ